

Գյուղատնտեսութեա Փ. Ի. ԱԽԵՄԱՆԻ ՀԱՅ Ն. Դ. ՅՈՒԼԻՇԻՆՅԱ

ԹԱՄԲՈԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ

Լուսումների բարգամանեց՝ Զ. ՄԵՍՈՅԱՆ



631.5

ԱՀ-59

ԴԵՑՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

631.5
m. 59

14 AUG 2010

CA 32-1
59

Գյուղատնտեսելութեան գիտութեան համար Ա. Դ. Ֆելիքսովով

ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խաղումներով բարգմանեց՝ Զ. Մեսթով

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՊՈՏՈԽՆԵՐԻ
Գուշակ Խաչի
ՀՀ

I

Բամբակի բերքահավաքմտն կամպանիայի
նշանակությունը

«Բամբակագրծության զարգացումը Միության մեջ՝ ներկա հնդամյակում, պետք է նվանա բամբակի ցանքսի առաջնությունը լայնացնելու և բերքատվությունը բարձրացնելու համար մեր բոլոր հնարավորությունները մաքսիմալ չափով ոգտագործելու ուղիով, այն հաշվով, վոր հնդամյակի վերջին, վնչ միայն մեր Միության տեքստիլ արդյունաբերությունը ազատենք արտասահմանից ներմուծվող բամբակից, այլ և մեր տեքստիլ արդյունաբերական հետագա ընդլայնման համար անհրաժեշտ սեղերվունենանք»:

(Համկամկուսի ԿԿ(բ) 1929 թվի հուլիսի 18-ի վորոշումից):

Անցյալ հնդամյակում, Խորհրդային Միությունը՝ արտասահմանից բամբակի գնելու վրա—կես միլիոնդ վոսկի բուրդոց ավելի լի ծախսել:

Մեզ համար միանգամայն պարզ կլինի կուսակցության առաջարկած՝ սեփական բամբակագրծության արագ թափով զարգացնելու և խորհրդային բամբակի ունենալու—մարտական խընդիրը, ինթե մի բովել վերը, հիշած գումարը համեմատելու վիճակը խորհրդային ինդուստրիալ խոշորագույն գիգանտների կառուցման արժեքի հետ։ Բամբակի ստանալու համար արտասահման նետած գումարով մենք կարող կլինինք կառուցել՝ այնպիսի նոր գիգանտներ, վորոնք իրենց արժեքով հավասար կլինիյին։

Թուրքսիբին՝ վոր արժե 180 միլիոն բուք.

Դնեպրոստրոյին՝ 204 միլիոն բուք.

Ստալինգրադի արակտորի գործարանին՝ 50 միլիոն բուք.
և մի շարք նոր ելեկտրոկայաններին։

Հնդամյակի և նրա վճռական տարվա բամբակի ծրագրի կատարելը վոչ միայն Խորհրդային Միության ազատում և արտասահմանյան բամբակի կախումից, այլ և լայն հնարավորու-



60025-66

թյուններ և ստեղծում թեթև արդյունաբերության կառուցումը
ծավալելու համար:

Վոսկի վալյուտայի տնտեսումը նպաստում և ծանր ին-
դուստրիայի կառուցման հետագա ծավալմանը, ամրացնում և
յերկրի ինքնապատպանությունը՝ վերջապես, յերբորդ վճռական
տարվա բամբակի ծրագրի կատարելը կամրացնի մեր նվաճում-
ները կուիկտիվացման ֆրոնտում՝ նպաստավոր պայմաններ
ստեղծելով համատարած կուկտիվացման ավարտման և նրա հի-
ման վրա կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիա ին-
թարկելու համար:

1931 թվի, հնգամյակի վճռական տարվա առաջնահատ-
կությունը նրանումն ե, վոր Միության մեջ սպառվող ամբողջ
հնդագոր բամբակի 2 միլիոն 130 հազար տոնն բերքի 90% ը
պետք և հանձնի կոլլուգ-կոսուներատիվ սեկտորը: Միայն
կոլտնտեսությունները պետք և հանձննեն 1.130 հազար տոննից
ավելի հնդագոր, վոր կազմում և ամբողջ պլոտուկցիայի 53% ը:

Այժմ, յերբ բամբակը աճում և մեր դաշտերում և հեռու-
չե նրա բերքահավաքի շրջանը՝ մեր առաջ ծառանում և մի մար-
տական խնդիր, նախապատրաստել նրա բերքահավաքն այն-
պես, վոր չանաքը կատարի յուրժամանակ և վոչ մի կնդուղ
բամբակ մինչև ձյունն իջնելը դաշտում չմնա: Բացի գրանից,
հավաքած բամբակը լուրաժամանակ պետք և հանձնել բամբակա-
զտիչ գործարաններին, վորպեսզի վերջիններս, առանց դադար-
ների, կարողանան աշխատել և դատձ բամբակ մատակարարեն
մեր տեքստիլ արդյունաբերությանը:

Բամբակն իբրև հումուզի, զեռ ևս չունի իր մրցակիցը:
Իզուր չե, վոր նրան տվել են Շավիտակ վոսկի» կոչումը և յեթե
թվելու լինենք այն բոլոր բարիքները, վոր տալիս ե այդ սքանչելի
բուլսը՝ հասկանալի լինի նրա անկախության համար մղվող համառ
պայքարը:

Բամբակից պատրաստվում են զանազան տեսակի մանվածք-
ներ ու գործվածքներ, ինչպես որինակ—չիթ, բատիստ, մարկիզետ,
շիփոն, մատկեպալամ և այլն: Նրա հունդը հիմնական հումուզին
և հանդիսանում ձիթահան արդյունաբերության համար, վորից
նա արտադրում և զանազան տեսակի և վորտկի ձեթ՝ պահա-
ծոներ, մարգարին, լուղելիքներ, ուստ պատրաստելու համար:
Քումագ անասուններին կերտակերելու և դաշտերը պարարտացնելու
համար: Հունդի կնեղ՝ վոր ծառալում և իբրև կեր, անասուն-

ների համար, վառելիք և հումուզի՝ արհեստական մետաքս, լա-
վօրակ թուղթ և պայթուցիկ նյութեր պատրաստելու համար:
Վերջապես բամբակենու թուփն ել ոգտագործվում և վորպես
վառելանլութ:

Հնդագոր բամբակի արտագրությունն ավելացնելով և Խոր-
հրդակին արդյունաբերությանը սեփական բամբակի հումուզի մա-
տակարարելով՝ բամբակացան կոլտնտեսականներն ու վաղվա կոլ-
տնտեսական—անհատական տնտեսատերերը, մասնակցումին սո-
ցիալիզմի կառուցմանը—մեր յերկրում ու գրանով ոժանդակում մեր
տժրողը՝ Միության ժողովրդական տնտեսության բարգավաճ-
մանը, նրա ինդուստրացմանն ու ապրանքային դժվարություն-
ների վերացմանը:

Ենչ վերաբերում է ապրանքների պակասին, այժմ սենք հը-
նաբավորթյան ունենք ծավալելու թիթե արդյունաբերու-
թյան հումուզային բաղան և առաջ շարժել բաղաքի մտսույթական,
սպառման ազգանքների արտադրությունը»
(ընկ. Ստալինի ԽVI համադրումը արտասահման հասից):

||

1390 թվի բամբակի բերեահավաքի բերությունները

Կուսակցության XVI համագումարի հիշյալ առաջադրու-
թյունների իրակութման տեսակետից՝ 1931 թիվը հանդիսանում
է վճռական տարի:

Այդ հանգամանքը, կոլտնտեսային սեկորէ վրա իր ամբողջ
ությամբ և լուրաքանչյուր կոլտնտեսության ու կոլտնտեսա-
կանի վրա առանձնապես, ամենապատասխանաւուու պարտավո-
րություն և դուռմ բամբակը ժամանակին ու ամբողջապես հա-
վաքել և պետությանը հանձնել

Անցյալ տարվա բամբակի բերքահավաքի ու հանձնման,
կամպանիայի թերությունները ոլիսի հաշվի առնվեն այս տարվա
բերքահավաքը կազմակերպելիս, վորպեսզի չլըկնվեն այն անհե-
րելի սխալները, վոր կատարվեցին անցյալ տարի:

Պետք և վճռական ու անողոք պայքար մղել զուղի հակա-
խորհրդային, կուլտկային տարրերի դեմ, վորոնք անցյալ տար-
վա նման, վոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնի վնասելու բեր-
քահավաքի կամպանիային և բամբակն ամրողապես պետությանը
հանձնելու պլանի կատարմանը: Դրա համար նրանք կոգտագոր-

ձեն մեր անցյալ տարվա ամենաչնչին թերություններն ու բացերն անգամ: Տրանսպորտային դժվարությունները, բամբակացան շըջաններին հացահատիկ ու արդյունաբերական ապրանքացան մատակարարող կոռպերատիվ ցանցի նեղ տեղերը մատի փառներ մատակարարող կոռպերատիվ ցանցի նեղ տեղերը մատի փառնացան կղարձնեն մեր դասակարգային թշնամիներն ու նրանց թաթան կղարձնեն իրենց վնասարևության վոստանը:

Վորմաքելին անցյալ տարվա բերքահավաքման կամպանիայի հիմնական թերություններն ու բացերը.

Կոլտնտեսականների աշխատանքի և հաշվառման թուլ կազմակերպումը, գործավարձի սիստեմի համարյա ամրողությամբ բացակայությունը, աշխատող ձեռքերի վատ դասավորումը:

Կոլտնտեսություններում ստացած արդյունքը վոչ թե ըստ կատարած աշխատանքի քանակի, այլ ըստ շնչի ըստ կատարած աշխատանքի ծրագրի ուշ ըաշխելու դրությունը: Բերքահավաքի աշխատանքի ծրագրի ուշ կազմելն ու չմասսայիկանացնելը, վորի հետևանքով եւ սոցմըբեցումն ու հարվածայնությունը չծավալելը, իսկ սոցմըբումը և հարվածայնությունը հեշտությամբ կարելի իւ ծավալել միայն այս գեղգում, իբր յուրաքանչյուր կոլտնտեսականին և կոլտընտեսությունների կոնկրետ կերպով հասկանալի իւ աշխատանքի քանական և վորակական ցուցանիշները: Այս թերություններն ինչ կամ և վորակական հարված հասցըին բամբակի բերքահավաքման խոսք, վոր զգալի հարված հասցըին բամբակի համպանիայի հաջող ընթացքին:

Շատ կոլտնտեսություններում ինքնահօսի մատնվեցին բամբակի մշակության աշխատանքները: քաղանը, բուկը տալլուշացրին, վորպիսի հանգամանքը զգալի չափով անդրադարձավ բամբակի վորակի ու բերքատվության վրա:

Անցյալ տարի, մեր բամբակագույշ գործարաններին վատուրակ բամբակ տալու խոշոր պատճառներից մեկն ել այն եր, վոր բամբակ բամբակի ընդունման արժեքը նշանակվեց վոչ թե ըստ հնդագոր բամբակի անդամագույշ գործարանների հնչականիքի միջին արժեքը: Այս մի անմանվեց անխափի բոլոր տեսակի հնդագորի համար: Դա մի անհներելի սխալ եր համապատասխան բամբակային կազմակերպությունների կողմից, վոր իր հերթին զգալի ազդեցություն ունեցավ հնդագոր բամբակի վատ տեսակագործման ու հատկության վրա: Թէ կոլտնտեսությունները և թե անհատ բամբակացանները, շահագրգուված չիներով հնդագոր բամբակի տեսակագործման խնդրով սկսեցին գնան կայաններին ու գործարաններին հանձնել վատորակ, աղբոտ բամբակ, վորից մեր տեքստի արդյունաբերությունը զգալի չափով մնասվեց:

Յոդ սխալը պարզ ե, վոր չի կրկնվի այս տարի, բամբակը գղնահատովի ըստ լնդունված տեսակների, արժեքների համապատասխան տարրերությամբ:

Սակայն այդ մասնակի սխալներն ու ձեղքվածքները չեն կարող նվաստացնել կոլմող շինարարության սապարեզում ձեռքբերված խոշոր հաջողակայություններն ու նվաճությունները:

Հիմնվելով անցյալի փորձի և կոլտնտեսությունների մեծամասնության ձեռքբերած նվաճութների վրա, խորհրդների VI համագումարը պարզակի վորոշումներ հանեց՝ աշխատանքի կազմակերպման, գործավարձային սխատեմին անցնելու և արդյունքը, ըստ աշխատանքի վորակի բանակի բաշխելու մասին:

Այս գարնանից, կոլտնտեսությունների զգալի մեծամասնության մեջ կիրառված գործափարձային սխատեմն արգեն բավականաշտի բարձրացրել և աշխատանքի արտադրողականությունը: Մեր կոլտնտեսությունները վոչ միայն կատարել այլ և զերակատարել են իրենց պլանները: Բամբակի բերքահավաքի աշխատանքներ կազմակերպելիս՝ պետք ե ըստ ամենայնի ոգտագործել անցյալի փորձը: Բամբակի բերքահավաքի համար տրված նորմաները լայն քննության առարկա պիտի դարձնել կոլտնտեսություններում: Այդ հանգամանքը տեղիք կատարել համպանիայի առաջադրելուն և սոցմըբցման ու հարվածայնության ձավալմանը:

Բամբակի բերքատվությունը, հետեապես և կոլտնտեսությունների արդյունքը բարձրացնելու համար, բացի աշխատանքի միջատ կազմակերպելուց, անհրաժեշտ ե, վոր կոլտնտեսության դեկազաներն ու բոլոր կոլտնտեսականները զինված լինեն բամբակի անման ու հատունացման մասին անհրաժեշտ զինվածությունը:

Ծանոթ չինելով այն պահանջներին, վոր առաջադրում և բամբակն իր հատունացման և կնքուղների բացման շըջանում անկախ նախընթաց շրջանում կատարած բարեհաջող աշխատանքներից, կարելի յի զգալի չափով բերքատվությունն իջեցնել: Այդ հանգամանքը պետք ե հաշվի առնել բերքահավաքը նախապատրաստելիս ու վերացնել կոլտնտեսականների ագրո—անդրագիտությունը:

Բամբակի հասնելը

Շատ բույսերի պառաղները համարյա միաժամանակ են հասնում (որինակ հացաքույսերը). դա հասրավորություն եւ տալիս բերքը միանգամից հավաքելու. սակայն բարձակենու պրատուղ-կնդուղները միաժամանակ չեն հասնում, այլ տասահճանարար—սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների լնթացքում՝ կնդուղների աճումն ու հասնելը կանգ և առնում աշնան ցրտերն ընկնելուց հասունացած կնդուղները ցրտերն ընկնելուց հետ էիլ են բացվում, իսկ չհասածները մնում են առանց բացվելու:

Բամբակինու բոլոր կնդուղների բամբակի հատկությունը միտտեսակ չեւ մինում: Բամբակի վարակի տարբերությունը կտխված եւ վոչ միայն նրա հասունության պատճանից, այլև կնդուղների դառավորությունից բամբակենու վրա և չանտքելու հատկությունից: Բամբակի այդ առանձնատեսակաւթյանը պետք և ծանթ լինի ամեն մի կոլտնտեսական, վօրպեսզի 1,2 և 3 բերքը իրար չխառնի, ինկատի ունենալով, վոր նրանց վորակը, և հետևապես արժեքը—տարբեր եւ:

Բամբակինու թե ծաղկելը և թե նրա կնդուղների բացվելը կատարվում և լորոշ կարգավ—ցածրի ճյուղերից սկսած՝ դևակի վեր, այն ել վոչ թե տատիճանարար, մեկը մյուսի հետեւյց, այլ խմբերով, կամ ինչպես ընդունված և ասել փորձակալաներում՝ «կոնուսներով»:

Կնդուղների այդ ցածրից դեպի վեր գծով բացվելը, սովորաբ կատարվում և 2-3 որվա ընդմիջումներով. մինչդեռ միենալու ճյուղի վրա գտնվող մի կնդուղից մինչև հետեւյալի բացվելը՝ ավելի գանդաղ և կատարվում, 5-7 որվա ընդմիջումով: Աւորիշ խոսքով ասած—բամբակինու ծաղկելու ու կնդուղների բացվելը ցածրից գետի վեր, կատարվում և կարծատե, իսկ դեպի կողք, ճյուղերի լեռկարությամբ՝ լեռկարատե հերթերով:

Մեր կոլտնտեսականները պետք ե լավ ծանոթ լինեն բամբակենու աճման այդ ընթացքին, վօրպեսզի կարողանան նախորդ վորոշել սպասվող բերքի չափն ու ըստ այնմ դասավորեն իր նաև բերքահտվաքման աշխատանքները:

Բամբակի բերքը ճիշտ վորոշելու համար, մի կարևոր հան-

գումանք կա պիտի աչքի առաջ ունենալ, այդ այն ե, վոր քամբակենու բոլոր ծաղիկներն ել պառող չեն տալիս: Բողբոչների դպալի քանակը, ծաղկելուց քիչ հետո, սկսում ե թափվել: Թափվում են զլիավարապես ցողունից հետո, ճյուղերի ծայրերին գոնվող կոկոնները և հաճախ, ճյուղերի ծայրի բոլոր ծաղիկներն անպառող են հանդիսանում ու թափվում են իրար յետից:

Բամբակենու ծաղկելը սովորաբար մնում է միայն մի որ, վորից հետո թառածում ե, ընկում և նրա տեղը գոյանում և փոքրիկ կոկոն—կնդուղ, վորը աստիճանարար աճելով՝ 20-25 որում հասնում է իր լրիվ միծությանը: Կնդուղները, նայած բամբակենու տեսակին, տեղական կլիմայական պայմաններին ու հողի հատկությանը, հասնում են, ծաղկելուց հաշված՝ 50-60 որվա ընթացքում: Այդ ժամանակամիջոցում, կնդուղների մեջ հասնում են բամբակենու սերմերը: Կնդուղն սկսում է չորանալ, նրա փոփոկները յնտեւ են զնում ու բացում բամբակի սպիտակ քուլաները:

Բողբոչների մասսայական թափման պատճառները գետ ինչպիս հարկն ե, չեն ուսումնասիրված, սակայն մի բան և հայանի: Վարքան լավ ե կատարվում ցանքը, քաղնանը, ջրելք և առասարակ մշակության տեխնիկան համապատասխանում և ապրոմինիմումին՝ այնքան նվազում է կոկոնների թափման տոկոսը:

Առածներից սպարզ ե, վոր թանգարժեք պետք և համարել այն տեսակի բամբակենին, վորի սկզբնական կնդուղները բացվում են ցածրի ճյուղերին և թափվող կոկոնների քիչ տոկոս և տալիս:

IV

Ենչից և նվազում բամբակի բերքը

Բամբակը, առնասարակ, պատկանում և ամենաքննարակ ու չափ խնամք պահանջող կուլտուրական մշակույթների շաբթին: Վարքան խնամքով ու հմտորեն և կատարվում նրա մշակությունը, այնքան նա ավելի յի վարձատրում իր բերքավագությամբ և ընդհակառակը՝ նրա պահանջները ժամանակին չկատարելն ու վատ խնամքը՝ զգալի չափով աղդում են նրա բերքի չափի և վորակի վրա:

Աւշ ցանելուց՝ (մայիսի 10-15 ից հնաոս) կնդուղներն ուշ են առօս և մինչև աշնան ցրտերն ընկնելը նրանցից շատերը խոհ են մնում: Ապիկար, անսւազպիր խնամքից՝ թափվող կոկո-

կոնհերի թիվն ավելանում է, զորից նվազում և բամբակի բերքը։ Միանման պայմաններում, բամբակի դաշտի խոնավության չափը մեծ ազգեցություն և ունենում կնդուղների աճման ընթացքի, հետեաբար և բերքատվության վրա Խոնավության պակասությունից, կնդուղներն սկսում են ժամանակից շուտ չորաշնալ, վաղաժամ հասնել տալով նվազ կորիզներ և վատորակի բամբակի Սովորաբար, «Պամլա», անջրդի բամբակի կնդուղներն ավելի շատ են թափում և կնդուղները մոտ 10 որով ավելի շուտ են բացվում, քան ջրովի դաշտերինը։

Բամբակի դաշտին չափից ավելի խոնավություն տալը կամ չորացնելը, զորակիս ծալքանեղ յերկութեներ, վաս են ազգում բերքատվության վրա Ավելորդ Ջրելը, մի տերլու շաբթով ուղացնում և բամբակի համանելը։ Առանձնապիս վնաս և Ջրելը հասունացման ըլջանում։ Ազդ ջրջանում, ինչպիս ցուց և տվել լավագույն կորանտեսությունների փորձը, մի անգամից ավել չպիտք է ջրել։ Վորքան քիչ քաղհանովի բամբակի դաշտն ու քիչ բուկը տրիփի, անջրան ցածր կլինի ստացված բամբակի վորակը։ Բամբակի հետ միենուում դաշտում, մի քանի տեսակ բուկսեր ցանելը, որինակ—սիփի, ձմերուկ, դպում և այլն, մնասակար և բամբակի համար, զորովհետեւ այդ կողմանի բուկսերը քամում են հողի մեջ պարունակվող սննդաբար հլութերը և նվազեցնում բամբակենու տճումը։ Հողն իր ժամանակին, ինչպիս աեղական, այնպիս և հանքալիքն պարարտանյութերով չպարարտացնելը, բերքի ավելացման տեսակետից ցանկալի հատեանք չեն տալիս։ Բամբակինու վառսառների դիմ ժամանակին չկռիլը, նվազեցնում և այդ ձեռնարկումների արդյունքն ու չի ապահովում բամբակի լրիկ բերքատվությունը։

V

Բամբակի վորակը

Բամբակի հատկությունը վորոշելիս, ամենից առաջինկատի յետ առնվում նրա թերերի յերկարությունն ու ամբությունը, սաւկայն հենց միենուն կնդուղից ստացված բամբակի թերերը տարբեր յերկարության են լինում։ Հունդը ըրջապատող բամբակը տրվաբար յերկու շերտից և լինում բաղկացած, ներքին շերտը կազմում են այն կարճ թելիկները, վոր թաղվիքի նման կպած և մինում հունդին։ Ազդ թելիկները տարբեր գույնի չեն—սպիտակ՝

շագանակագույն, մոխրագույն և այլն։ Բամբակը զտելուց հետո, արդ թելիկները վորոշ հիմնական գույն են տալիս հունդին։ Կան այդ թելիկները վորոշ հունդը մերկ և լինում—այդ տերբառակի տեսակները կոչվում և «մերկակորիչ»։

Բամբակի վերին շերտը հիմնական հունդույթն է կազմում, ինչպես ասացինք, միենույն կնդուղի մեջ, այդ շերտի թելիկը տարբեր տարբառության ու հատկության են լինում։ Ամենալավ բամբակը յերկարության ու հատկության մեջ կուղղերին կպաճն ե, իսկ ամենավատը (կարճ ու թուլ թելինդի կուղղերին կտնվողը՝ վորքան լավ և աճում կնդուղի ու լիքով) ծայրերին գտնվողը՝ վորքան լավ և աճում կնդուղի ու լիքով։ Տամարդում առողջ, այնքան յերկար ու ամուր են լինում բամբակի թելիերը։

Բամբակինու վերևի ճյուղերին գտնվող կնդուղների բամբակն ավելի թուլ և լինում, քան ներքի ճյուղերինը։ Յըտերից բացվող խոկ կնդուղների բամբակն իր վորակով ամենահետաքաշը մինչև վերջին ժամանակներս այդ բամբակին անպետք վատնե ե, մինչև վերջին ժամանակները համար, սակայն ներկահեր համարվում արդյունաբերության համար, սակայն ներկահեր համարվում մեր տեքստիլ արդյունաբերությունն այդ վատորակ բամբակը մեր տեքստիլ արդյունաբերությունն այդ վատորակ բամբակն ել և սպասարձում ավելի հժանագին զործվածքներ պատրաստելու համար։ Եթենույն տեսակի բամբակի թելի միջին յերբառակարությունը (միլիմետրով), հաճախ, աճման պայմանների հետեւ գտնքով, տարբեր և լինում։

Յերկար թերեր ունեցող հնդավոր բամբակը, հունդից զտելիս, յելքի¹⁾ ավելի մեծ տոկոս և տալիս Այսպիսով ուրիշն, բամբակի հատկությունը, շատ բանով կախված և նրան ինամենը և չանաքելու վրա գործարված աշխատանքի վորակից։

Ժամանակին ցանելը, լավ մշակել, չափավոր ջրել, ժամանակին, ըստ տեսակների, բերքը հավաքել—ահա թե ինչ պիտի անի ամեն մի կոլտնտեսության, վորակաղի լավ բերք ստանա և դրանով ամբացնի կոլտնտեսության տնտեսական դրությունն ու անհատական անտեսություններին ներգրավի կոլտնտեսության մեջ։ Ռուսի, ամեն մի կոլտնտեսություն պետք և այնպիս գտարկուի իր աշխատանքը, վորտիկի կարողանա բերքահավաքը ժամանակին ու ըստ տեսակների կատարել։

1) Յելքի տոկոս—նշանակում ե, բամբակագահ գործարաններում, զտեած (հունդից պատրաստ) բամբակի քաշի հորաբերությունը հնդավոր բամբակի քաշին։

Տնօթավոր բամբակի տեսակավորումը

Խ. Ա. Հ. Մ-ի Առեւտքի ժողկամի 1930 թվի սեպտեմբերի
3-ի վրոշմամբ, հնդավոր բամբակը, ըստ իր ծագման, բաժան-
վում է 2 հիմնական կարգերի. այն ե՝

1. Ամերիկական սերմի բամբակ:

2. Յեղիպատական «»

Ըստ տեղական, կլիմայական պայմանների ու հողի հատկություն,
միևնույն ծագումի սերմից, տարբեր հատկություն բամբակ և
սուցվում: Այդ պատճառով և, հնդավոր բամբակը կոչվում և
այն վշջանի անունով (լալն իմաստով), վրանի նա ցանկում,
մշակվում ե՝ որինակ Միջին Ասիայում ցանկով բամբակը, ըստ
շրջանների—կոչվում և Ֆերղանիի, Թաշքենդի, Տաջիկստանի, Կա-
զակաստանի, Սամարդանիի և այլն. Անդրկավկասում մշտկվողը՝
Մուղանի, Ղարավազի, Բորչալի, Հայաստանի և այլն:

Վերը հիշեած լուրաքանչյուր շրջանի բամբակը, իր հերթին,
ըստ դույնի, հասունության աստիճանի, խոնավության չափի և
մի շարք ուրիշ հատկությունների՝ բաժանվում է մի շարք տեսակ-
ների:

Անդրկավկասի բամբակի համար, վերադաս մարմինների կող-
մից 1931 թվի համար սահմանված են հետեւյալ տեսակները.

Առաջին տեսակ:

Յերկրորդ տեսակ:

Յերրորդ «

Կուսակ

Երբահավաքը սետք ե կազմակերպել այնպես, վոր ամբողջ
հավաքված բամբակի առաջին տեսակը կազմի 78% էերկրորդ ան-
ուակը 12% է լիբրորդ տեսակը 10% :

Վերոհիշյալ լուրաքանչյուր տեսակի համար նշանակված ե
առանձին գնման արժեք, վորով և ընդունում են կոլտնտեսու-
թյուններից ու անհատ բամբակացաններից:

Այսպես—

Առաջին տեսակի 16 կիլոգրամի համար 5 ռ. 11 կ.

Յերկրորդ տեսակի » » 4 « 75 «

Յերրորդ տեսակի » » 4 « 37 «

և կուսակը, առանց տեսակավորման, ամեն մի կիլոգրամին վճար-
վում է 25 կոպեկ:

Ստացված բամբակը ծիշու տեսակավորելու համար, ըոլոր
դնման կայաններում ու գործարաններում կան համապատասխան
տեսակների նմուշներ ստանդարտ: Ամեն տարվա բերքի համար
նոր ստանդարտ և սահմանվում:

Տեսակավորման խնդրի շուրջը, վնայ և հանձնող կազմերի
միջև ծագող տարածաշնությունները կարգավորելու համար, դըն-
ման կայաններում և գործարաններում, շահագրգուված կողմերի
ներկայացուցիչներից կաղմակում են, այսպես կոչված, արքիտրած
հանձնաժողովներ:

Տեսակների նկարագրությունը:

Առաջին տեսակ. համարվում է ույն հնդավոր բամբակը,
վոր ունի առողջ տեսք ու բնույթ, չոր ե, սպիտակ, տես-
րեսների և աղբի, իբ մեջ պարունակելու և 85% վոչ պակաս հա-
սած բամբակի և տալիս 34% մից վոչ պակաս զտած բամբակի ցյելք:

Երեկորդ տեսակ. ավելի շատ խոնավությունն պարունակող
և քան մեծապես լը, գորշ գեղնագույն, կամ գեղնագույն, 50
տոկոս վոչ պակաս հսած բամբակի և $27,8$ տոկոս զտած բամ-
բակի լիլքով:

Երերորդ տեսակ. գորշ գեղնագույն, կամ գեղնագույն ե, մեծ
մասմբ խակի և մնած բամբակով, ավելի խոնավ քան լիլքորդ
տեսակը—սակայն խոնավությունն այն աստիճանի չպիսի լինի,
վոր արգելք. հանդիսանա բամբակադրիչ մեքենայի աշխատանքին:
Յելքը պետք է լինի $26,6\%$:

Կուսակ. Չրացված կնուղներից հանած բամբակն ե, գորշ-
գեղնագույն, 75 տոկոս չհառած ու մեռած թեկներով: Գեաք և առ
23,3 տոկոսից վոչ պակաս զտած բամբակի լիլք:

Հասած բամբակի պարունակության և յելքի տևկաները,
բոլոր տեսակների նկատմամբ տրվում են մոտավոր նշառաթյամբ:

VII

1931 թվի բամբակի ցանքսի աւրածությանն
ու սպասվող բերքը Խարելդային Հայաստանում

իինչեղեւ հայտնի չե, այս տարվա պլանով նախատեսված
էր Հայաստանում ցանել 25000 հեկտար բամբակի:

Շնայած այդ հեկի թվի ոյալ լինելու նկատմամբ կանոքա-

ևական տրամադրություններով վարակված անձանց ունիցած թերահավատ վերաբերմունքին, այդ պլանը վոչ միայն կատարվեց, այլ և 1000-ից ավելի հեկտարով գերակատարվեց:

Հետագայում կարկտահար յեղած և ուշ լինելու պատճառով չվերացանված 2500-ից ավելի հեկտար տարածությունը հաշվի չառնելով՝ Խորհրդային Հայաստանում բամբակի ցանքսի տարածությունն ու ըստ նախնական տվյալների սպասվող բերքը, հետևալ պատկերն են տալիս, ըստ շրջանների, յիրեք գույներուն ունեցող սեկտորներում. այն ե՛ խորհրդալին, կողեկտիվ և անհատական տնտեսություններում.

| | | |
|----------|-----------|-------------|
| բամբակի | սպասվող | մի հեկտարից |
| ցանքսի | ընդհանուր | սպասվող |
| տարածու- | բերքը | միջին բերքը |
| թյունը | տոններով | ցենտերով |

Վաղարշապիտի օրշան

| | | | |
|-----------------------|-------|---------|-------|
| Խորհրդ. տնտեսություն- | | | |
| ներում.— | 350,0 | 245,0 | 7,0 |
| Կոլտնտեսություն- | | | |
| ներում.— | 2843 | 32695,0 | 11,5 |
| Անհատական տնտ. | 3907 | 4404,0 | 11,27 |
| Բնդամենը՝ | 7100 | 7918,5 | 11,29 |

Չուրզուգուլու օրշան

| | | | |
|-------------------|------|--------|-------|
| Խորհրդ. տնտես. | 650 | 455,0 | 7,0 |
| Կոլտնտեսություն.— | 5143 | 5888,7 | 11,45 |
| Անհատական տնտ.— | 2703 | 3033,6 | 11,22 |
| Բնդամենը՝ | 7846 | 8922,8 | 11,37 |

Պամարդի օրշան

| | | | |
|------------------|------|--------|-------|
| Կոլտնտեսություն- | | | |
| ներում.— | 2636 | 3044,6 | 11,55 |
| Անհատական տնտ.— | 3529 | 2965 | 11,23 |
| Բնդամենը՝ | 6165 | 7009,6 | 11,36 |

Ջեղիբասարի օրշան

| | | | |
|---------------|------|--------|------|
| Կոլտնտեսութ.— | 585 | 547,0 | 9,35 |
| Անհատ. տնտ. | 1263 | 1116,2 | 8,8 |
| Բնդամենը՝ | 1848 | 1663,2 | 9 |

| | | |
|----------|-----------|-------------|
| բամբակի | սպասվող | մի հեկտարից |
| ցանքսի | ընդհանուր | սպասվող |
| տարածու- | բերքը | միջին բերքը |
| թյունը | տոններով | ցենտերով |

Դարավագի օրշան

| | | | |
|------------------|----|---|-------|
| Կոլտնտեսություն- | | | |
| ներում | 52 | » | 68,6 |
| Անհատական տնտե- | | | |
| սութ.— | 53 | » | 42,2 |
| Բնդամենը՝ | 85 | » | 110,8 |
| | | | 13,03 |

Ամբողջ Հայաստանում

| | | | |
|------------------|-------|---|---------|
| Խորհրդ. անտե- | | | |
| ություններում | 1000 | » | 700 |
| Կոլտնտեսություն- | | | |
| ներում | 11252 | » | 12756,4 |
| Անհատական տնտ. | 11452 | » | 12600 |
| Բնդամենը՝ | 23704 | » | 26056,4 |
| | | | 11,00 |

Բայց բերված թվերի կոլտնտեսությունները ցանել են ամբողջ բամբակի տարածության 47,6 տոկոսը, վորից սպասվող բերքը կազմում է ամբողջ բերքի 50 տոկոսը, իսկ նրանց ցանքսի միջին բերքատվությունը՝ ընդհանուր միջին բերքատվության 103,5 տոկոսը: Այս ցուցանիշներն ընդգծում են այն հաղթանակ-ներն ու նվաճումները, վոր ունեցել են մեր կոլտնտեսություններն անցյալ տարիների հանդեպ:

Հիմա այս նվաճումներն ապահովելու և անհատական տնտեսությունները—կոլտնտեսությունները ներդրավիկու համար, մեր կոլտնտեսությունները ամեն ջանք պետք է դնեն բամբակի բերքահավաքի պլանն ըստ քանակի և վորակի գերակատարելու այսպես ինչպես գերակատարեցին ցանքսի պլանը:

Դրա համար, մեր կոլտնտեսությունները պետք է լավ կազմակերպին բերքահավաքի աշխատանքը և նրա բարձր մեթոդ-ները՝ սոցմրցումն ու հարկածայնությունը ծավալին:

VIII

Բամբակի բերքահավաքի ժամկետները

Բամբակի բերքահավաքի պլանը պետք է կազմել և աշխատանքները տանել այն հաշվով, վոր մինչև աշնան ցըսերն ընկերությունները ու ձեռնուն գալը ամբողջ բերքը համարված լինի: Բերքահա-

Վաքը ժամանակին չկատարելու հետևանքն այն է լինում, վար նախ բացված բամբակը վաստ յեղանակներին չանտքելիս ըզգաց չափով կորցնում է իր հատկությունը, հետևապես և արժեքը, յիշերորդ՝ բերքի մի մասը կորչում, փչանում և ձլունից ու ցըրտերից:

Բամբակի բերքահավաքը Միության բոլոր շրջաններում միաժամանակ չի սկսվում—այսպես որինակ, Միջին Ասիայում սկսվում և մոտավորապես սկսվելութիւնը 13-ից, Անդրկովկասում սկսելութիւնը 20—25-ից, իսկ Հյուսիսային Կովկասում և Դրամում ավելի ուշ:

Միութենական կոլյուզկենարոնը, իր գծով ուղարկել և բաժանի բերքահավաքի մոտավոր սրացուցը, տեղերում մշակելու և համապատասխան ժամկետու նշանակելու առաջիկա բերքահավաքի համար.

Հայաստանի համար, Հողմովկոմատն ընդունել և բամբակի բերքահավաքի հետևյալ ժամկետները.

Կոլտնտեսությունների և անհատական անտեսությունների համար.

| | |
|--|--|
| I-ին չանաքը սկսվելութիւնը 20-ից մինչև հոկտեմբերի 10-ը, | |
| II » հոկտեմբերի 11-ից » նոյեմբ. 6-ը | |
| III » նոյեմբերի 7-ից » 25-ը | |

Խորհրդացին տնտեսությունների համար.

| | |
|--|--|
| I-ին չանաքը սկսվելութիւնը 20-ից հոկտեմբերի 10-ը. | |
| II » հոկտեմբերի 11-ից նոյեմբերի 14-ը. | |
| III » նոյեմբերի 15-ից » 25-ը. | |

Բառ վարում յննթագրվում և հավաքել

| | |
|---|--|
| I-ին չանաքին ամրագլ սպասվող բերքի 33 %-ը | |
| II » » » » 50 %-ը | |
| III » » » » 17 %-ը | |

Առաջին չանաքն սկսվում է, բամբակենու վրա առաջին 5—7 կնդուղները բացվելուց հետո: Ամենաբարձր վորակի բամբակն ստացվում և ալդ չանաքից, ուստի, մեր կոլտնտեսություններն առաջին չանաքից ստացված բերքը չպետք և խառնեն մյուսների հետ և ընդհանրապես հատուկ ուշադրություն պետք եղարձնին բամբակի տնտեսակավորման վրա:

IX

Խնձալես պետք ե կատարել չանաքը

Թեղ մոտ բարակի չանաքը կատարվում է ձեռքով: Այդ աշխատանքն առանձին ֆիզիքական լարվածություն չի պահանջում, ուստի կանայք, գիտահասներն ու նույնիսկ լեռեխաները կարողանում են լայն մասնակցություն ցույց տալ այդ աշխատանքներին: Ձեռքի չանաքի համար առանձին հարմարություններ չեն պահանջվում: Սովորաբար, բացված կնդուղներից, հասած բամբակը հավաքում են մեջքից կտպած գողնոցների մեջ: Գողնոցը լցնելուց հետո, չանաքով գողնոցը լին և անում ու ամբողջ բամբակը լցնում պարել մեջ, կամ մի բանի վրա գետնին փռում: Սովորաբար, հայվաքած բամբակը պարկերն են լցնում լեռկուկունտեսուկան: մեկը պարկին ե պահում, մյուսը՝ բամբակը մեջն ածում: Պարկերը կարելի ի լցնել միայն բոլորովին չոր բամբակը:

Բամբակն սկսում են հավաքել առավոտից, ինը ցողը բոլորվին չորանում ե, սակայն աշխատող ձեռքերի պակասության դեպքում, կարելի լի հավաքել և թեթև խոնակություն պարունակող բամբակը, վորը բարակ շերտով պետք ե փռել գետնին, մաքուր շորի, խսիրի, կամ բրեղենտի վրա, վոր արել տակ լավ չորանատ:

Չանաքողներից պահանջվում է:

1. Միաժամանակ հավաքել հատկությամբ և արտաքին տեսքով բոլորովին, միանման բամբակը:
2. Հավաքելու ժամանակ մի տեսակը՝ մյուսի հետ չխառնել:
3. Վոչ մի կնդուղ հասած բամբակ թփերի վրա չթողնել:
4. Կնդուղներից բամբակը մաքուր հավաքել, առանց մի մասը մեջը թողնելու:
5. Հավաքելիս բամբակը չաղբոտել, աշխատելով կողմանի իրերի խառնուրդից խուսափել:
6. Թուլլ չտալ կողմանակի իրեր խառնելու, ինչպես, որինակ կնդուղի փոկոճներ, չհասած կնդուղներ և ալին:
7. Թույլ չտալ վորել ձևով բամբակը խոնավացնելու, լավ իմանալով, վոր գրանից բամբակի վորակն ընկնում ե:
8. Բերքահավաքը կատարել միենուլու ըրիգադներով, գործավարձի սկզբունքով:



Բըրիգաղների կազմը վորոշվում ե ըստ դաշտից սպասվող բերքի և մի բանվորունու որտեղան չանաքի նորմայի:

Չանաքողներից բամբակն ընդունելու գործը լավ ե կազմակերպել ուղին ու տեղը, դաշտում. զրա համար նախորոք պետք ե պատրաստել կախովի կշեռքներ և կշռաքարեր:

X

Եերքահավաքի աշխատանիների կազմակերպելը

Կոլտնտեսությունները բերքահավաքը պետք ե նախապատրաստեն բամբակը հանելուց շատ առաջ: Համաձայն տվյալներն չանի պլանի, մոտավորապես վորոշելով սպասվող բերքի չափը և բերքահավաքի ժամկետներն ըստ առանձին չանաքների՝ կոլտընտեսությունների վարչությունները ոկտոք և սոսույդ հաշվի առնեն պահանջվող և իրենց ունեցած բանուժը, անհրաժեշտ ինվենտարը, փոխադրական միջոցները—ժամանակին պակասը լրացնելու համար: Միջոցները պետք ե ձեռք առնեն նույնպես դաշտում, հանրային սնունդ, մանկամտուրներ, մանկական հրապարակներ կազմակերպելու համար, վորպեսզի աշխատող մայրերը միանգամբ ակատ լինեն լերեխաներին խնամելու հոգախց:

Բըրիգաղների և գրուպպաների գործակարձը կազմակերպելիս պետք ե լենել մի աշխատավորի համար սահմանված արտադրական նորմաներից: Որպես արտադրության նորմաներ պետք ե սահմանել հետեւկալ աշխատանքների համար:

1. Բարդանների և պարկերի կարկատելը հինգ ու նորի համար առանձին:

2. Հավաքած բամբակի տակը փոելու բրեգենաների, խոիրների կարկատելը.

3. Բամբակի պահեստաները մաքրելն ու կարգի բերելը.

4. Մի մանկամտուրի ղեկավարի խնամքին հանձնվող լերեխաների քանակը.

5. Հանրային սննդի աշխատավորների (խոհարար) բեռնվածությունը.

6. Հավաքած բամբակն ընդունել—կշռել և գնման կալանաներն ու գործարանները փոխադրելը (կշռարարների և փոխադրողների նորման,

7. Յեզ վերջապես, զոր ամենակականն ե, մի բանվորի ո-

րական չանաքի նորման՝ առաջին, լերկորդի և լերրորդ բերքահավաքների համար առանձին-առանձին:

Հայաստանի կոլտնտեսությունն ընդունել ե, Հողժողկոմատի հետ համաձայնեցրած, բամբակի բերքահավաքի հետևյալ նորմաները, լենելով մի հեկտարից 11,2 ցենտներ սպասվող միջին բերքատվությունից և կոլտնտեսությունների բանուժի հսարակություններից կոլտնտեսություններից,

| | | | | | |
|-----|--------------|-----------|-------|----|-----------|
| I | Բերքահավաքին | 1 բանվորի | համար | 40 | կիլոդրամ. |
| II | | » | » | 50 | » |
| III | | » | » | 22 | » |

Այդ նորմաները արտադրական խորհրդակցություններում քննության առնելով և հարկ լեզած վոփոխություններով հաստատելով՝ կոլտնտեսությունները հաշվի լեն առնում աշխատանքի ժամկետերը և հաջորդականությունը, ըստ այնու կազմակերպում բրիգադները ու անցնում նախապատրաստական, ապա բերքահավաքի աշխատանքներին:

Կոլտնտեսությունն ամենավճռական միջոցներ պետք ե ձեռք առնելի, իբ բոլոր աշխատող ձեռքերը՝ տղամարդկանց, կանանց և զիտահասներին մասնակից անելու բերքահավաքին. իսկ զրա համար, ինչպես ասացինք, նախորոք դաշտում պետք ե կազմակերպի հանրային սնունդը, մսուրն ու մանկական հրապարակները վորպեսզի բամբակ հավաքող մաքրերի աշխատանքը լրիվ չափով ոգտագործվի: Անհրաժեշտ ե կազմակերպել նաև կոլտնտեսության չհամայնացրված անասուններին կերպարելու խնդիրը:

Բամբակի բերքահավաքի ժամանակ, գործակարձը պետք ե կիրառել անհատուրեն, դա զգալի չափով կբարձրացնի կոլտնտեսության աշխատանքի արտադրությունը:

Բերքահավաքի ճիշտ հաշվառման համար, ցանկալի յե, վոր ամեն մեկի հավաքած բամբակը հենց տեղին ու տեղը դաշտում ընդունվի: Դրա համար պետք ե նախորոք կշռոքներ ու կշռաքարեր պատրաստել: Կշռոքները ստուգելու համար ցանկալի յե ստուգիչ կշռոք ունենալ:

Հավաքած բամբակը նպաստականարմար ե անմիջապես դաշտում հանձնել գնման կայաններին և բամբակազտիչ գործարաններին: Որվա ընթացքում, առանձին չանաքողների հավաքած բամբակն ընդունելիս, պետք ե տալ նըանց համապատասխան ստացուածն: Աշխատանքի որվա վերջը հաշվում են կիլոգրամներով

բրիգադի յուրաքանչյուր անդամի հանձնած բաժբակը և նշանակում հաշվառման ցուցակում, յուրաքանչյուրի տղթանվան զիմաց Բամբակ հասկառողների աշխատանքի գորակին հետևելու համար, անհրաժեշտ և հատուկ վերահսկիչներ ունենալ դաշտում:

XI

Աշխատանքի հաշվառման տեխնիկան

Բամբակի բերքահավաքի ժամանակ, կոլտնտեսություններում, աշխատանքի հաշվառումը հետեւյալ ձևով և կատարվում բոլոր աշխատանքներն ըստ նրանց բնույթի, դժվարության, պատասխանատվության և վորակի կարգերի բաժանելուց հետո, սահմանում են որական աշխատանքի և արտադրանքի ստույգ նարմաները ապա համաձայն աշխատանքի կարգերի՝ զնահատում են որական արտադրանքի նորմաները: Աշխատանքի զբական և բացասական առանձին ցուցանիշների համար պարզաբարձրություն և տուղանքի չափեր են սահմանում: Ազդ բոլորը արտադրական խորհրդակցության նիստում քննության առնելով՝ համապատասխան ուղղումներ են մտցնում և բարձր չափանիշներ ընդունում ոսցմբցման և հարկածայնության կարգով իրագործելու համար: Այսուհետև, կոլտնտեսությունը, ըստ աշխատանքի ծավալի, աշխատունակ անդամների թվի, փոխադրական և այլ միջացների՝ կազմակերպում են խառն, մեկ, կամ մի քանի բրիգադներ, մասնագիտական յենթօլորտպաններով և ողակներով: Շրիգագի յաւրաքանչյուր անգամի կառաւած աշխատանքի միակ չափանիշը համբիսանում և այդ աշխատանքի համկուրաւնե ու հանակը՝ տեխառանի ուերագ առահայտված: Արնչդնու վատ կազմակերպված կոլտնտեսություններում բավականանում ելին միայն տարեկանը, աշխատած սրերի համար կատարվող հասարակ նշանառումներով:

Առաջատառության աշխատանքներին ավելի լավ պլանային ընույթ տալու համար, անհրաժեշտ և կատարվող աշխատանքները սերտորեն կապակցել բամբակի բերքահավաքի պլանի և կոլտնտեսության ընդհանուր հաշվետվության հետ:

Անհրաժեշտ և բրիգագին և առանձին անհատներին հանձնաբարված աշխատանքը ձեակերպել փաստաթղթով—պատվերով (հարյած), վորը մի կողմից հիմք կծառայի բրիգագի ամեն մի ան-

դամի կատարած աշխատանքը հաշվառման յենթարկելու, մյուս կողմից վաստաթուղթ հանդիսանա հաշվառման համար, նրանց դրամական և մթերացին յեկամուտի հաշվելը պահելու համար:

Պատվերի մեջ պետք ե հիշատակված լինեն:

1. Աշխատանքի ծավալն ու բնուլիթը:
2. Աշխատանքը կատարելու տեղի տնունը:
3. Պատվերով հանձնաբարված ամբողջ աշխատանքի գնահատությունը աշխատանքի որերով և որական արտադրանքի նորմանի գնահատությունը, ըստ պատվերի առանձին արտադրանքի:
4. Այդ աշխատանքները կատարելու համար տրված ինվենտարի քանակն ըստ տեսակների և անունները:
5. Քաշիչ ուժի քանակն ու տեսակը:
6. Բրիգագայի անունը, բրիգագիների և բրիգագի անդամների:

Ըստ պատվերի արված աշխատանքն ավարտելուց և այդ աշխատանքը հանձնաժողովի կողմից ընդունվելուց հետո, բրիգագիրը պատվերը վերադրանում և գրասենյակին, ըստ վորում, ըրեգագիրը, բրիգագայի յուրաքանչյուր անդամի ազգանվան դիմաց նշանակումներ և կատարում նրանց աշխատանքի քանակի և վորակի մասին: Կատարված պատվերի հետ միասին, բրիգագիրը ներկայացնում և գրասենյակին նաև բրիգագի բոլոր անդամների աշխատանքային գրքույկները:

Գրասենյակը, կատարված պատվերն ընդունելով՝ հաշվում և նորմալ կոտարած աշխատանքի որերի թիվը, հետո աշխատանքն ընդունող հանձնաժողովի արած նշանառումների հիման վրա, բրիգագի յուրաքանչյուր անդամի աշխատանքի որերի հանրագումարն և տալիս, վորը գրանցում և նրանց անձնական հաշվերում և աշխատանքային գրքույկներում: Աշխատանքային գրքույկները, համապատասխան գրանցումներ կատարելուց հետո վերադրածվում են տերերին:

Կատարած աշխատանքի հանրագումարը քննության և առանցում կոլտնտեսության ընդհանուր ժողովում, Վորը վորոշումներ և կալացնում պարզեատերելու լավ հարգածայիններին և պարստվանք հայտնելու վատ աշխատողներին:

Պետք և լավ իմանալ, վոր կոլտնտեսության աշխատանքների առանցքը կարգապահությունն և հանդիսանում: Աշխատանքի զիսցիպինայի բացակայությունը նպաստում և ամբողջ կոլտնտեսության արտադրության քայլքայմանը:

Գործավարձի սխտեմն ամրապնդում և աշխղիսցիպլինան, ոժանդակում սոցմբցման և հարվածայնության ծավալմանն ու նպաստավոր պայմաններ ստեղծում համատարած կոլեկտիվացման հաջող ավարտելու և ամբողջ գյուղատնտեսության սոցիստական վերակառուցման համար:

XII

Պետք և պայմարել բամբակի կորուսների դեմ

Ինչպես անցյալ տարիների փորձը ցուց և տվել, բամբակի կորուստների ամենախոշոր պատճառներից մեկը հանդիսանում է կուլակալին տարրերի ակտիվ ֆասարարությունը՝ բամբակի բերքահավաքի և հանձնման աշխատանքների ընթացքում:

Բամբակացան կուլակը, չարամտորեն աշխատում և վորքան կարելի է քիչ ցանել վատ մշակել և քիչ հանձնել պետությանը: Բամբակի գաշտը ժամանակին չշանաքելու և արագացնելու համար, անցյալ տարի, պըոլիտարական դատարանը արժանի պատիժ նման չարամիտներին, սակայն կուլակը, վորպես զառակարգալին թշնամի՝ մինչև իր վերջին շռնչը փչելն որհասական պայքար պետք և մղի մեր հաջողությունների դեմ: Նա կատաղի ազիտացիա չե մղում բամբակի բերքահավաքը ժամանակին կատարելու և ամբողջովին պետությանը հանձնելու դեմ: Նա «հավասարեցման» և աշխատանքի «ազատության» ջատագով և հանդմանում մեր կոլտնտեսություններում, հակառակ և աշխատանքի կարգապահությանը, սոցմբցմանն ու հարվածայնությանը: Կուլակի այդ վնասարար գործունելությունը չպետք և թերագնահատել, նրա մեջնալություններին պետք և բոլցերկյան հականտրված տալ՝ բերքահավաքը ժամանակին կատարելով և բամբակի ամբողջ բերքը պետությանը հանձնելով:

Դրա հետ միասին, պետք և միջոցներ ձեռք առնել բամբակի մի մասը տնտեսություններում թողնելու և գաղտնի գնորդների վաճառելու դեմ:

Սլդ յերևույթի դեմ պետք կովել բամբակացան շրջաններին հացամթերք և արդյունաբերական ապրանքներ մատակարարող ցանցի լիակատար տջակցուցթյուն ցուց տալով, վորդեսզի առիթ չտանք մեր գասակարգալին թշնամուն, սպեկուլյացիայի միջոց դարձնելու ալդ ասպարեզում մեր ունեցած դժվարություններն ու ճեղքածքները:

Որինակելի բերքահավտքով առաջին տեղը գրավող կոլտընտեսությունները պետք և բուքսիրի առնեն մեր բամբակազըտիչ գործարանները և ողնեն նրանց բանվորներին, բամբակի գտնան պլանը գերակատարելու:

Բամբակի, երա հաւկարյան յեկ անկախության համար մղվող պայմարի բոլոր նակատներում, կոլտնենսականները պետք և զենքեն առաջապուր մարտիկների շարժեցում:

ԹՈՎԱՆԴԱԿԱԽԹՑՈՒՆ

| | Եջ |
|--|----|
| 1. Բամբակի բերքահավաքման կամպանիակի նշանակութ. | 3 |
| 2. 1930 թվի բամբակի բերքահավաքի թերությունները | 5 |
| 3. Բամբակի համնելը | 8 |
| 4. Ի՞նչից և նվազում բամբակի բերքը | 9 |
| 5. Բամբակի վորակը | 10 |
| 6. Հնդավոր բամբակի տեսակավորումը | 12 |
| 7. 1931 թվի բամբակի ցանքսի տարածությունն ու սպասվող բերքը և Հայաստանում | 13 |
| 8. Բամբակի բերքահավաքի ժամկետները | 15 |
| 9. Ի՞նչպես ովհաք և կառարել չանաքը | 17 |
| 10. Բերքահավաքի աշխատանքների կազմակերպելը | 18 |
| 11. Աշխատանքի հաշվառման տեխնիկան | 20 |
| 12. Պետք և պայքարել բամբակի կորուսարերի դեմ | 22 |



«Ազգային գրադարան



NL0291602

17.015

1440 10 419. (14, 0.



Агрономы Ф. И. УШАКОВ и Н. Д. ФИЛИМОНОВ

ЗА КАЧЕСТВО СБОРА ХЛОПКА В КОЛХОЗАХ

Госиздат ССР Армении
Эривань - 1951